ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ФАКУЛЬТЕТ МЕЖДУНАРОДНЫХ ОТНОШЕНИЙ

YEREVAN STATE UNIVERSITY

FACULTY OF INTERNATIONAL RELATIONS

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

• ՀՀ, քաղաք Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1 • Республика Армения, Ереван, 0025, Алека Манукяна 1 • 1 Alex Manoogian, 0025, Yerevan, Republic of Armenia (+374 60)71-00-79, 71-00-78, int.rel@ysu.am, www.ysu.am

№ 261 «__11___»___11_____2025 թ.

Արձանագրություն N 261

ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի գիտական խորհրդի 2025թ-ի նոյեմբերի 11-ի նիստի

Նիստին ներկա էին գիտխորհրդի 36 (երեսունվեց) անդամներից 30-ը:

1. ՄՀ ֆակուլտետի 4 ամբիոնների վարիչների և հետազոտությունների 2 կենտրոնների տնօրենների 2024-2025 ուստարվա հաշվետվությունների ներկայացում /զեկ.՝ խորհրդի նախագահ Տ. Եփրեմյան/:
2. Դոցենտի կոչման համար մրցույթի անցկացում / զեկ.՝ գիտ. քարտուղար Գ. Բալասանյան/:
3. Իսպաներեն լեզվով ուսումնական ձեռնարկների հրատարակության երաշխավորության հարցը /զեկ.՝ գիտ. քարտուղար Գ. Բալասանյան/:
4. Թեկնածուական ատենախոսության թեմայի և ղեկավարի հաստատման հարցը /զեկ.՝ գիտ. քարտուղար Գ. Բալասանյան /:
5. 2025-2026 ուստարվա **«Ազգային անվտանգություն»** կրթական ծրագրի մագիստրատուրայի առկա ուսուցման 1-ին կուրսի մագիստրոսական թեզերի թեմաների և ղեկավարների հաստատման հարցը:
6. Ընթացիկ հարցեր:

Խորհուրդը որոշեց.

1. ՄՀ ֆակուլտետի 4 ամբիոնների վարիչների և հետազոտությունների 2 կենտրոնների տնօրենների 2024-2025 ուստարվա հաշվետվությունները հաստատել:

2. ա/ Ընտրել հաշվիչ հանձնաժողով և քվեաթերթիկում գրանցել դոցենտի կոչման համար թ.գ.թ. Երեմ Վարդազարյանի անունը:

բ/ Անցկացնել փակ գաղտնի քվեարկություն: Փակ գաղտնի թվեարկությունից հետո գիտական խորհրդի նիստը հաստատեց հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը, ըստ որի խորհրդի 36 անդամներից քվեարկությանը մասնակցել են 30-ը և ձայները բաշխվել են հետևյալ կերպ՝

Դոցենտի կոչման համար՝

Երեմ Վարդազարյան – 28 կողմ, 1 դեմ, 1 անվավեր քվեաթերթիկ:

գ/ Ընտրել հաշվիչ հանձնաժողով և քվեաթերթիկում գրանցել դոցենտի կոչման համար թ.գ.թ. Գոռ Պետրոսյանի անունը:

դ/ Անցկացնել փակ գաղտնի քվեարկություն: Փակ գաղտնի թվեարկությունից հետո գիտական խորհրդի նիստը հաստատեց հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը, ըստ որի խորհրդի 36 անդամներից քվեարկությանը մասնակցել են 30-ը և ձայները բաշխվել են հետևյալ կերպ՝

Դոցենտի կոչման համար՝

Գոռ Պետրոսյան – 29 կողմ, դեմ չկա, 1 անվավեր քվեաթերթիկ:

3. բ.գ.թ., դոցենտ Ռուզաննա Պետրոսյանի հեղինակած **«Իսպանիայի երկրագիտություն», «Դիվանագիտական արարողակարգ» և «Դիվանագիտական գրագրություն. այցեր և զրույցներ»** վերտառությամբ իսպաներեն լեզվով ուսումնական ձեռնարկները երաշխավորել հրատարակության:

4. Հաստատել թեկնածուական ատենախոսության հետևյալ թեման.

ա/ ԵՊՀ Քաղաքագիտության ամբիոնի հայցորդ **Վահրամ Ռուբենի Հովյանի** թեկնածուական ատենախոսության թեմա հաստատել **«Հայկական սփյուռքը Կանադայի արդի քաղաքական գործընթացներում»**, **ԻԳ.00.02- «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ»** մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար: Գիտական ղեկավար հաստատել թ.գ.դ. դոցենտ **Վարդան Աթոյանին**:

բ/ ԵՊՀ Քաղաքագիտության ամբիոնի հայցորդ **Հասմիկ Վահեի Առաքելյանի** թեկնածուական ատենախոսության թեմա հաստատել **«Արիմիությունների ինստիտուցիոնալ կայացման նախադրյալները Հայաստանի Հանրապետությունում»**, **ԻԳ.00.02-«Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ»** մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար: Գիտական ղեկավար հաստատել ք.գ.դ., պրոֆեսոր **Աշոտ Ալեքսանյանին**:

գ/ ԵՊՀ Քաղաքագիտության ամբիոնի հայցորդ **Էլեն Հովհաննեսի Մելիքյանի** թեկնածուական ատենախոսության թեմա հաստատել **«Եվրասիական ինտեգրացիոն գործընթացների ազդեցությունը հետխորհրդային երկրների կայուն զարգացման վրա»**, **ԻԳ.00.02-«Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ»** մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար: Գիտական ղեկավար հաստատել ք.գ.դ., պրոֆեսոր **Աշոտ Ենգոյանին**:

դ/ ԵՊՀ Քաղաքագիտության ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ **Լիանա Գարիկի Գրիգորյանի** թեկնածուական ատենախոսության թեմա հաստատել **«Եվրոպական ինտեգրման գործընթացների ինստիտուցիոնալացման հեռանկարները հետխորհրդային երկրներում»,** մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար: Գիտական ղեկավար հաստատել ք.գ.դ., պրոֆեսոր **Աշոտ Ալեքսանյանին**:

5. 2025-2026 ուստարվա **«Ազգային անվտանգություն»** մագիստրատուրա առկա 1-ին կուրսի ուսանողների թեզերի թեմաները և ղեկավարներին հաստատել:

Գիտական խորհրդի նախագահ *Տ. Եփրեմյան*

Գիտական խորհրդի քարտուղար *Գ. Բալասանյան*